

այնպես նեղեր զգոռ դրացին՝ գուլտանն Իկոնիոյ, մինչեւ հարկ լինել գոռագոյնն Սալահէտտինի գալ նմա յօգնութիւն (1180), ըստ պատմելոյ Արաբաց, եւ ստիպել զնա արձակել զգերին եւ թողուլ զվիճական յափշտակեալս. սոյն օրինակ եւ Լեւոնի դիպող ժամ գտեալ՝ ՚ի տագնապի կացուցանէր զորդիս Խիճ-արսլանն սուլտանի, մերթ ասպատակութեամբ՝ յաւար եւ ՚ի գերութիւն, եւ մերթ յափշտակելով զբերդորայս նորին¹⁶:

Մի ՚ի գլխաւորաց անտի ամրոցաց էր *Պոսկանա*, որպէս ցուցաք ՚ի տեղագրութեան, ՚ի գահս Կիլիկիոյ. յորոյ վերայ գիշերայն յարձակեցաւ գունդստապլն Հայոց *Միր Պաղտին*, թերեւս փռանկ ազգաւ, հաւանութեամբ Լեւոնի. բայց ոչ միայն ոչ յաջողեցաւ գողանալ զբերդն, այլ եւ սպանաւ ՚ի տեղուջն. յետ երկուց ամսոց ինքնին Լեւոն նոյնօրինակ գաղտ գնացիւք հրոսեալ՝ ՚ի բուռն էարկ զբերդն, կալաւ եւ զբերդապահն՝ որ կոչէր *Տիփլի ամիրայ*, եւ սպան, եւ ընդ նմին արս երկերիւր ՚ի պահապանաց, ՚ի վրէժ սպանման սպարապետին իւրոյ (Պաղտինի): Եւ զայս արար յերկրորդում ամի իշխանութեան իւրոյ (1188). յորում ամի շինեաց եւ զհսկայագործ զարմանալի զդղեակն Անագարբայ, եւ արձանագրեաց պանծալի յիշատակաւ, որպէս աւանդեցաւ ՚ի տեղագրութեան քաղաքին:– Գուցէ զայսու ժամանակաւ եղեւ եւ առումն եւ վերաշինութիւն Լուլուայ ամրոցի՝ ՚ի Հեթմեանն Շահնշահայ, զոր յիւր զօրաւիզն կրթեաց Լեւոն, տեղի ապաւինի եւ դիմամարտ կարգեալ ընդդէմ ամրոցաց արեւմտեան հարաւային կողմանց Երկրորդն անուանեալ Կապապադովկիոյ, եւ այնու յաջողեցաւ գրաւել զմայրաքաղաք նահանգին՝ զՏիանա, որպէս ուսաք յեղբորէ վերոյիշեալ բերդակալին, ՚ի Ս. Լամբրունեցոյն: Յայտ այսու լինի զի ոչ սակաւ բացագոյն քան զբնիկ սահմանս Կիլիկիոյ՝ ճապաղեցաւ Լեւոն. քանզի եւ չէր ոչ նորա եւ ոչ նախնեաց իւրոց սահմանս ինչ զծեալ իւրեանց իշխանութեան եւ երկրակալութեան. այլ ըստ նախնեացն առածի՝ որ ՚ի Խորենացոյն աւանդեալ, «Սահման քաջաց՝ զենն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի». եւ Լեւոնի հատու յոյժ էր զենն, եւ ստէպ սրեալ ճապաղեօք յաջողակ պատերազմաց. եւ եւս առաւել՝ աւագասէր

¹⁶ Արքունի պատմիչ մեր ասէ. «Խոհեմ իշխանօքն եւ քաջամարտիկ զինուորօք՝ քաջապէս մղէր զհոյլս թշնամեացն. եւ զորդիս Խիճ-արսլան սուլտանին՝ որք տիրեցին տան Հոռոմոց՝ նեղեալ զնոսա յոյժ, առնլով ՚ի նոցանէ բերդորայս, եւ գերելով զերկիր նոցա աւերմամբ: Եւ արիագոյն քաջութեամբ սպառազինեալ կայր ՚ի մէջ թշնամեաց իրբէ զախոյեան անպարտելի»: